ք. Երևան 16 դեկտեմբերի 2021թ.

Առողջապահության նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանի, ով գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից,, և «Յունիտրանս» ՍՊԸ-ն այսուհետ՝ «Փոխադրող», ի դեմս տնօրեն Ֆ. Զաքարյան, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1.Սույն պայմանագրով Փոխադրողը պարտավորվում է կազմակերպել Պատվիրատուի կողմից իրեն վստահված բեռը հասցնելը սույն պայմանագրի 1.3. կետում նշված նշանակման վայր և այն հանձնելը Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել բեռի փոխադրման կազմակերպման համար սահմանված վարձը համաձայն սույն պայմանագրի 3. կետի:
1.2. Անհրաժեշտության դեպքում, պատվիրատուի պահանջով, լրացուցիչ վճարի դիմաց, Փոխադրողը կարող է կազմակերպել բեռի մաքսային ձևակերպումների ծառայություն և բեռնափոխադրում մինչև Պատվիրատուի կողմից նշված հասցե;
1.3.Համաձայն սույն պայմանագրի, բեռ է համարվում՝ Սպուտնիկ պատվաստանյութը, այսուհետ՝ «Բեռ»: Բեռի ընդհանուր զանգվածը կազմում է 667.0կգ/4տեղ (օդային բեռնափոխադրում, տերմոարկղով):
1.4. Սույն պայմանագրով բեռի բարձման վայր է համարվում ՌԴ Մոսկվա քաղաքը, իսկ բեռնաթափման վայրն է համարվում ՀՀ, Երևան քաղաքը (բենային համալիր):
1.5. Սույն պայմանագրի դրույթները իրականացվում են ծառայությունների դիմաց գումարի հավաքագրման սկզբունքով (Collect պայմանով), քանի որ, որպես իրական բեռնափոխադրող հանդես է գալիս ՌԴ ռեզիդենտ ընկերություն, այսուհետ՝՝Փոխադրող՝, որն իրականացնում է ՌԴ-ում բեռի փոխադրման համար անհրաժեշտ գործողությունները, բեռի ապահովագրումը և փոխադրումը նշանակման վայր:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Փոխադրողը պարտավոր է՝
2.1.1.Պատվիրատուի հայտով՝ բեռնման նպատակով նրան տրամադրել Բեռի փոխադրման համար պիտանի ու սարքին տրանսպորտային միջոցներ, որոնք համապատասխանում են սանիտարական և տեխնիկական նորմերի
պահանջներին: Բեռը հասցնել նշանակման վայր և այն հանձնել Ստացողին բարձման օրվանից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում:
2.2. Պատվիրատուն պարտավոր է՝
2.2.1.մինչև Հանձնման վայր տրանսպորտային միջոցների հասնելը Բեռը նախապատրաստել փոխադրման, իրականացնել ապահով փաթեթավորում կամ արկղավորում: Պատվիրատուն պարտավոր է փոխհատուցել երրորդ անձանց կողմից (ծովային գիծ, օդային, ցամաքային փոխադրողներ, տարանցիկ մաքսակետ և այլ), դուրս գրված ծախսային հաշիվները (պահեստավորման, պարապուրդի, և այլն), եթե նման խնդիր առաջացել է:
2.2.2. մինչև Բեռը բեռնելն ստուգել Բեռի փոխադրման համար տրանսպորտային միջոցների պիտանիությունը:
2.3.Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել համապատասխան բեռի փոխադրման համար ոչ պիտանի տրանսպորտային միջոցներից:
2.4. Պատվիրատուն պարտավոր է ապահովագրել Բեռը :
2.5.Փոխադրումների առանձնահատկություններից ելնելով Բեռի բարձումը և դասավորումը իրականացնել փոխադրողի պահանջներին համապատասխան:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Փոխադրման գինը կազմում է 5183200 (հինգ միլիոն մեկ հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:
3.2. Պատվիրատուի կողմից պայմանագրի գումարը վճարվում է Փոխադրողի հաշվարկային հաշվին դրամական միջոցներ փոխանցելու միջոցով բեռը նշանակման վայր հասնելու օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1.Փոխադրողը, ընդունված հայտին համապատասխան, բեռի փոխադրման համար տրանսպորտային միջոցները չտրամադրելու, իսկ Պատվիրատուն՝ բեռը չներկայացնելու կամ տրամադրված տրանսպորտային միջոցներն այլ պատ-ճառներով չօգտագործելու համար կրում են օրենքով և սույն պայմանագրով սահմանված պատասխանատվություն:
4.2.Բեռ փոխադրողը և Պատվիրատուն ազատվում են տրանսպորտային միջոցները չտրամադրելու կամ տրամադրված տրանսպորտային միջոցները չօգտագործելու համար պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել՝
4.2.1.անհաղթահարելի ուժի, ինչպես նաև տարերային բնույթի այլ երևույթների (հրդեհների, ջրհեղեղների և այլն) և ռազմական գործողությունների հետևանքով:

4.2.2.որոշակի ուղղություններով բեռների փոխադրումներն օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես դադարեցնելու կամ սահմանափակելու հետևանքով:
4.2.3. օրենքով սահմանված այլ դեպքերում:
4.3. Փոխադրողը պատասխանատվություն է կրում բեռի կորստի, պակասորդի, վնասվածքի համար, որը տեղի է ունեցել այն փոխադրման համար ընդունելուց հետո, մինչև Բեռն Ստացողին հանձնելը, եթե իրականացվել է 2.4 կետի պահանջը, եթե վնասվածքը, կորուստը, կամ պակասորդը չեն ծագել այնպիսի պատճառներից, որոնց համար պատասխանատու է Փոխադրողը, ապա Փոխադրողը պարտավորվում է նպաստել և աջակցել կորած, պակասած և կամ վնասված բեռի համար երրորդ անձանց կողմից ապահովագրական հատուցումները ստանալու հարցում.
4.3.1.բեռի փոխադրման ժամանակ պատճառված վնասը Փոխադրողը հատուցում է՝
4.3.2. բեռի կորստի կամ պակասորդի դեպքում կորած կամ պակասած բեռի արժեքի չափով:
4.3.3.բեռի վնասվածքի դեպքում այն գումարի չափով, որով նվազել է դրա արժեքը, իսկ վնասված բեռի վերանորոգման անհնարինության դեպքում՝ դրա արժեքի չափով:
4.3.4. արժեքի հայտարարմամբ փոխադրման հանձնված բեռի կորստի դեպքում դրա հայտարարված արժեքի չափով:
4.3.5. բեռի կորստի,պակասորդի և վնասվածքի հետևանքով առաջացած վնասի հատուցման հետ մեկտեղ Փոխադրողն Պատվիրատուին վերադարձնում է փոխադրավարձը, որը գանձվել էր կորած, պակասած կամ վնասված բեռի փոխադրման համար:
4.4. Բեռի պահպանված չլինելու պատճառների մասին Փոխադրողի կազմած միակողմանի փաստաթղթերը (առևտրային ակտ, ընդհանուր ձևի ակտ և այլն) վեճի դեպքում դատարանի կողմից ենթակա են գնահատման այդ հանգամանքները վկայող այլ փաստաթղթերի հետ միասին, որոնք կարող են հիմք ծառայել Բեռ փոխադրողի կամ Պատվիրատուի պատասխանատվության համար:
4.5.Փոխադրողը, ընդունված հայտին համապատասխան, բեռի փոխադրման համար տրանսպորտային միջոցները ժամանակին չտրամադրելու, ինչպես նաև Բեռը ժամանակին նշանակման վայր հասցնելու և այն Ստացողին հանձնելու պարտավորության ուշացման համար կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույքաչափերով:
4.6. Պատվիրատուն սույն պայմանագրով սահմանված 3.2 կետի վճարման ժամկետները խախտելու դեպքում պարտավորվում է Փոխադրողին վճարել յուրաքանչյուր ուշացրած օրվա համար տույժ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույքաչափերով:
4.7. Պայմանագրի, հաշվի և միջազգային ապրանքատրանսպորտային բեռնագրի (ավիաբեռնագրի), վավերացված օրինակը հինգ օրվա ընթացքում Պատվիրատուի կողմից Փոխադրողին չվերադարձնելու դեպքում այն համարվում է ընդունված: Կողմերի միջև վավերացված և էլեկտրոնային հաղորդագրության միջոցով (և կամ ֆաքսիմիլային) ստացված փաստաթղթերն ունեն իրավաբանական ուժ:

5. Վեճի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանի քննությանը:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1.Սույն պայմանագիրը կարող է լուծվել կողմերի համաձայնությամբ կամ միակողմանիորեն՝ նրանցից մեկի կողմից սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում:
6.2. Պայմանագրի միակողմանի լուծումը կատարվում է գրավոր, խախտող կողմին այդ մասին 15 օր առաջ տեղեկացնելու միջոցով:
6.3.Սույն պայմանագրի ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե կատարված է գրավոր, և ստորագրված է կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները պայմանագրի անբաժանելի մասն են:
6.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Պատվիրատու»	«Փոխադրող»
Առողջապահության նախարարություն	**ՅՈՒՆԻՏՐԱՆՍ ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	Երևան, Հանրապետության 22 տարածք 4
Հայաստանի Հանրապետություն	Հայաստանի Հանրապետություն
Բանկային ռեկվիզիտներ	Բանկային ռեկվիզիտներ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011033769	Հ/Հ 1570021886860100
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 01535966
Ստորագրություն GRIGORYAN VARDANUSH 6802780100	Ստորագրություն .....
Վ.Գրիգորյան	**Ֆ.Զաքարյան**
Գլխավոր քարտուղար	**Տնօրեն**

Подписано: GRIGORYAN VARDANUSH 6802780100
DN: cn=GRIGORYAN VARDANUSH 6802780100, c=AM
Дата: 2021.12.20 12:18:33 +04'00'

Digitally signed by ZAKARYAN FRIDA 5708590084
Date: 2021.12.20 10:40:20 AMT